

SIRARPIE DER NERSESSIAN, *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, Baltimore, London, 1973, p. 108, pl. 8 color, pl. 243 black-and-white.

ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ ՆԵՐՍԵՍՅԱՆ, Ուոլթերսի արվեստի պատկերասրահի հայերեն ձևագրերը, Բալթիմոր, Լոնդոն, 1973, 108 էջ, 8 տախտակ գունավոր, 243 տախտակ՝ սև և սպիտակ:

Լույս է տեսել հայ միջնադարյան մշակույթին նվիրված ևս մի ուսումնասիրություն, որի հեղինակն է անվանի արվեստագետ, հայագետ և բյուզանդագետ, պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան պատվավոր ակադեմիկոս Սիրարփի Տեր-Ներսեսյանը: Նրա գրչին են պատկանում՝

„Manuscripts Armeniens illustres des XII^e XIII^e et XIV^e siècles...“ (1936 թ.), „Armenia and Byzantine Empire“ (1945 թ.), „Armenian Manuscripts in the Freer Gallery of Art“ (1953 թ.), „The Chester Beatty Library“ (1958 թ.), „Aghtamar church of the Holy Cross“ (1965 թ.) և բազմաթիվ փոքրածավալ մենագրություններ ու հոդվածներ: 1973 թ. լույս տեսավ Ս. Տեր-Ներսեսյանի տարբեր ժամանակներում տպագրված հոդվածների ժողովածուն՝ „Etudes byzantines et armeniennes“ (1973 թ.) երկու հատորով (Ա հատորը՝ բնագրեր, Բ հատորը՝ ալբոմ):

Ներկա գրախոսության առարկա գիրքը հեղինակի կողմից ներկայացված է որպես ձեռագրացուցակ, սակայն այն հնու է լույս տեսնել լինելուց: Դրքում ոչ միայն մանրամասնորեն նկարագրված են Բալթիմոր քաղաքի (ԱՄՆ) Ուոլթերսի թանգարանի 11 հայերեն ձեռագրերը, այլև, հեղինակին հատուկ լրջությամբ ու խորությամբ, կատարված է նրանց նկարագրողումների մանրակրկիտ ուսումնասիրությունը:

Նախ, մի քանի խոսք հիշյալ պատկերասրահ-թանգարանի մասին: Բնչպես տեղեկանում ենք գրքի առաջաբանից, այն ստեղծվել է Վիլյամ և Իր որդի Հենրի Ուոլթերսների կողմից, որպես մասնավոր հավաքածու: Վերջինիս համար Հ. Ուոլթերսը տարիներ ընթացքում հավաքել է Արևմուտքի և Արևելքի տարբեր ժողովուրդների ինչպես ձեռագրեր, այնպես էլ արվեստի ու մշակույթի զանազան տիպի գործեր՝ գեղանկարչական կտավներ, քանդակներ, կիրառական արվեստի նմուշներ և այլն: Այս եղանակով հավաքվել են բազմաթիվ իրեր, որոնք վերաբերում են մ. թ. ա. IV հազարամյակից սկսած մինչև XIX դարին: Հենրի Ուոլթերսի կտակի համաձայն, նրա մահվանից (1931 թ.) հետո, ամբողջ հավաքածուն հանձնվել է Բալթիմոր քաղաքին և

1934 թ. վերածվել քաղաքային թանգարանի:

Գրախոսվող աշխատությունը հանդիսանում է Ս. Տեր-Ներսեսյանի երրորդ ձեռագրացուցակը¹: Այն կատարված է նույն հիմունքներով, ինչ և նախորդները: Այստեղ նույնպես ձեռագրերը ցուցակում տեղավորված են ժամանակագրական կարգով, տրված են նրանցից յուրաքանչյուրի մանրամասն նկարագրությունն ու պատմությունը, հիշատակարաններից բաղկած են կարևոր հատվածներ (հիշատակարանների ամբողջական բնագրերը հայերեն լեզվով բերված են հավելվածում):

Հավաքածուի 11 հայերեն ձեռագրերից ինը ավետարաններ են, երկուսը՝ շարակնոց: Նրանց բովանդակությունը հատուկ քննության չի ենթարկված, տրված են միայն որոշ բացատրություններ²: Հիմնական ուշագրությունը բեռնված է ձեռագրերի մանրանկարների ուսումնասիրությանը և, ինչպես նշում է ինքը՝ հեղինակը, դա է կազմում աշխատության կարևորագույն մասը:

Մանրանկարների ուսումնասիրությանը վերաբերող բաժիններում նախ և առաջ տրված են հրեանաբանության լատի լիարժեք տեղեկություններ ձեռագրերի ստեղծման հանգամանքների, գրիչների և ծաղկողների մասին: Թվարկվում են վարպետների այն բոլոր աշխատանքները (տպագիր և անտպ), որոնք հայտնի են եղել աշխատության հեղինակին:

Մանր լինելով հայկական ձեռագրերի գրեթե բոլոր հավաքածուներին (Նրևանի, Երուսաղեմի, Վենետիկի, Վիեննայի, Փարիզի, Լոնդոնի, Մոսկ-

1 Առաջին երկուսը վերևում հիշատակված Ֆրիդի և Չեստեր Բիտտի արվեստի պատկերասրահների հայերեն ձեռագրերի նկարագրություններն են:

2 Ավետարանների վերաբերյալ նշված է միայն անառակ կնոջ մասին առակի զոյությունը Մարկոսի ավետարանի վերջում (որը հատուկ է ոչ բոլոր ավետարաններին), իսկ շարակնոցների նկարագրության մեջ վերլուծվում է նրանց կառուցվածքը, համեմատվում Ամստերդամի 1664 թ. առաջին տպագիր շարակնոցի բնագրի հետ:

վայի, Հենինդրադի, Քուրթիայի, Եգիպտոսի, ԱՄՆ-ի մի շարք թանգարանների և մասնավոր հավաքածուների), Ս. Տեր-Ներսեսյանը հնարավորություն է ունեցել անհրաժեշտ և հիմնավոր համեմատություններ անելու:

Ռիխարդ Ռեյնդալի դրած առաջարկում Ս. Տեր-Ներսեսյանի գործը իրավացիորեն գնահատված է որպես փայլուն աշխատանք, որը կարող է բավարարել ինչպես առհասարակ արվեստասեր ընթերցողներին, այնպես էլ հայկական, բյուզանդական և ընդհանրապես միջնադարյան արվեստն ուսումնասիրող մասնագետներին:

Ներկայացվող հրատարակությունը մի հատորի մեջ ամփոփում է և՛ ուսումնասիրությունը, և՛ վերարտադրությունների այբուբույնը: Գիրքն արտակարգ մեծ է իր չափերով (31,5X39 սմ) և տրված է պոլիգրաֆիկ բարձր որակով: Մանրանկարների վերարտադրությունները արված են իրենց իսկական չափերով, հիմնականում սև և սպիտակ. նրանցից միայն ութն են գունավոր: Ըստ որում՝ ներկայացված են ձեռագրերում զբաղվող բոլոր նկարազարդումները:

Ուղիթերսի թանգարանի հայերեն ձեռագրերի փոքրիկ հավաքածուն, որը պարունակում է թեև քիչ, բայց արտակարգ արժեք ներկայացնող նրժուշներ, իր նշանակությամբ կարող է համեմատվել, ինչպես նշում է Ս. Տեր-Ներսեսյանը, այնպիսի խոշոր հավաքածուների հետ, ինչպիսիք են Նրեանի, Նրուսաղեմի, Վենետիկի, Նոր Զուգայի, Վիեննայի և Ֆրիբի հավաքածուները:

Ուղիթերսի թանգարանում պահվող հայկական հնագույն ձեռագիրը (N° 537) զբաղվում է Սարգիս Բաճանայի ձեռքով 966 թ.: Սա ԱՄՆ-ի ձեռագրական հավաքածուներում առկա ամենահին ձեռագիրն է. իսկ մեզ հասած և թվական ունեցող հայկական ձեռագրերի շարքում հինգերորդն է իբ հնությամբ³: Այդ մասին Ս. Տեր-Ներսեսյանը գրում է. «Իր հնությամբ և նկարազարդումների բնույթով Ուղիթերսի ձեռագիրը հանդիսանում է հայ մանրանկարչության կարևորագույն հուշարձաններից մեկը: Եթե Մյունխենի ավետարանի մանրանկարները ներկայանում են իրեն ուշ դասական շրջանի ավանդույթների վերադարձներ, ապա Ուղիթերսի ձեռագրի մանրանկարները ցայտուն նմուշներն են բոլորովին այլ գեղագիտական կոնցեպցիայի: Խոսքը վերաբերում է վերացական այն միտումներին, որոնք բնորոշ են

եղև X դարի վերջի և XI դարի հայկական մի շարք ձեռագրերին: Այստեղ հեղինակն ակնարկում է այն հուշարձանները, որոնց ծագողները արտահայտչական հիմնական շեշտը դնում էին զարդային մոտիվների և գունային հարաբերությունների վրա, վերջիններիս միջոցով ստեղծելով չափազանց խոսուն պատկերներ:

Ուղիթերսի թանգարանում կան նաև կիլիկյան հայկական մանրանկարչության երկու սրանչի հուշարձաններ: Դրանցից մեկը՝ 1193 թ. ավետարանն է (N° 538), որը հանդիսանում է կիլիկյան զարդանկարային արվեստի լավագույն նմուշներից մեկը, մի արվեստ, որի մեջ ինչպես իրավացիորեն նշում է Ս. Տեր-Ներսեսյանը, հայ մանրանկարիչները հղել են անմրցելի:

Հավաքածուի երկրորդ կիլիկյան ձեռագիրը Քորոս Ռոսլինի ձեռքով 1262 թ. Հոմկլայում զարդանկարված մի ավետարան է (N° 539), որը հանրահռչակ նկարչի հայտնի աշխատանքների մեջ իր մանրանկարներով ամենից հարուստն է: Այն բացվում է Եվսեբիոսի թղթով, որը զբաղվում է երկու ճոխ զարդանկարված խորաններում, Եվսեբիոսի և Կարպիանոսի գիմանկարներով: Նույն բան ճոխ և գեղեցիկ են զարդանկարված համարարանների խորանները, որոնց մի քանիսի զլխազարդերում պատկերված են մարգարեները: Խորանների զարդերը կատարված են նկարչին բնորոշ վարպետությամբ և վերարտադրում են ընդունված ձևերի տարբերակները: Ռոսլինի ստեղծագործական հնարանները առավել ցայտուն են դրսևորվել թեմատիկ հորինվածքներում: Կիլիկյան մանրանկարչության մեջ առաջինը Ռոսլինն էր, որ թեմատիկ մանրանկարները ներմուծեց բնագրի մեջ, մանրամասնորեն պատկերելով ոչ միայն ավետարանական շարը (որը զետեղված է 15-ամրողական էջ զբաղեցնող մանրանկարներում), այլև առանձին առակներ, անգամ առակների դրվագներ, որոնք պատկերված են թե՛ լուսանցքներում, թե՛ տեքստի տարբեր մասերում (այդ մանր իլյուստրացիաների ընդհանուր քանակը հասնում է 67-ի):

Ձեռագրի մանրանկարների ուսումնասիրությունը Ս. Տեր-Ներսեսյանին բերում է այն եզրակացության, որ նկարազարդմանը մասնակցել են նաև ուրիշ նկարիչներ, հավանաբար Քորոս Ռոսլինի աշակերտները: Հակիրճ բնութագրելով մեծ վարպետի արվեստը, ուսումնասիրության հեղինակը նշում է, որ այն տպավորիչ է առաջին հերթին իր մեղմ, հարուստ տոնային անցումներով, ուր առավել հնչուն են կարմիրն ու կապույտը: Նկարիչը օգտագործում է ինչպես զրծային, այնպես էլ գունային լուծման միջոցները, սակայն առաջինը ենթարկվում է երկրորդին: Թեթև ստվերների օգնությամբ վարպետը հասնում է ծավալի հասկացողությանը: Կերպարներն

³ Առաջինը՝ Մյունխենի ավետարանն է, զբաղված 862 թ. առաջ, երկրորդը՝ Մաշտոցի անվ. Մատենադարանի չափարյան ավետարանը (ձեռ. N° 6200), բնագործակված 887 թ., երրորդն ու չորրորդը՝ դարձյալ Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրերն են, բնագործակված X դարի սկզբում՝ 902 թ. (N° 6384) և 909 թ. (N° 6202):

րը պատկերված են աղատ շարժումներով, բնականին հասնող կենդանությունում։ Այս կապակցությամբ Ս. Տեր-Ներսեսյանը գրում է. «Մենք այստեղ գործ ունենք իդեալականացված մի նատուրալիզմի հետ, որտեղ շեշտված են ավելի նուրբ էմոցիաները, քան կրքոտ զգացմունքները»։

Բուրոսովին այլ դեղագիտական հիմունքներով են կատարված 1455 թ. հիդանում գրված ավետարանի մանրանկարները (N 543)։ Տաղանդավոր նկարիչ խաչատուր քահանայի ձեռքով ծաղկված այս մատյանը հանդիսանում է հիդանի դպրոցի մանրանկարչության լավագույն օրինակներից մեկը։ Սույն ձեռագրում աչքի է ընկնում զարդային մոտիվների նկատմամբ այդ դպրոցի մանրանկարիչներին հատուկ սերը։ Ձևերի բազմազանության և պարզ ու մաքուր գույների բազադրության շնորհիվ խաչատուրի վրձնի ուժով այս նկարները ստանում են արտակարգ հնչողություն։ Ուշագրավ է ծաղկողի հիշատակարանը, որով նա հայտնում է, որ զարդարեց ձեռագիրը «ոչ վասն ընչից և վաճառոյ, այլ վասն սիրոյ և վասն միոյ տէր ողորմայի դոր ասէք ինձ յայսմ ատենի...

Հավաքածուի հինգերորդ հայերեն ձեռագիրը (N 542) գրվել է 1488 թ. Նկեղյաղ զավառում, որի գրչության կենտրոնները դեռ երկար ժամանակ շարունակում էին իրենց գործունեությունը։

Թանգարանի հինգ հայերեն ձեռագրերը (N N 541, 544, 545, 546, 547) XVII դարի գրչության և մանրանկարչության տարբեր կենտրոնների օրինակներ են։ Նշված ժամանակաշրջանը բնորոշվում է, ինչպես գրում է աշխատության հեղինակը, երկու հիմնական հակումներով՝ հին հայկական ավանդների վերածնությամբ և Արևմտյան նվթապայի արվեստի ազդեցությամբ։ Որպես զաղափար օրինակներ ամենից շատ օգտագործվում են XIII—XIV դարերում զարդանկարված կիլիկյան ձեռագրերը։ Դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ XVII դարում շատ ձեռագրեր վերստին վերանորոգվում և վերակազմվում

էին։ Այդ եղանակով ևս նոր շրջանի վարպետները ծանոթանում էին իրենց նախնիների ստեղծագործություններին։

Ս. Տեր-Ներսեսյանը նշում է, որ տվյալ ժամանակաշրջանի մանրանկարիչները հատկապես սիրում էին զարդարել ձեռագրերը լուսանցքային և տեքստի մեջ դետնողված փոքրիկ մանրանկարներով, որոնք ամենուրեք մեծ տարածում էին գտել։

Հավաքածուի հայերեն ձեռագրերից երկուսը (N 540 և N 542) արժեքավոր են նաև գրվադանախշերով, փորագրությամբ և թանկարժեք քարերով զարդարված արծաթյա և ոսկեջրած ճոխ կազմերով, որոնք վկայում են XVII դարի հայ ոսկերիչների բարձր արվեստի մասին։

Նկարագրված և ուսումնասիրված մանրանկարներին, կազմերին, նրանց ստեղծած վարպետներին Ս. Տեր-Ներսեսյանի կողմից տված բնութագրերն ու զնահատականները ըստ ամենայնի համոզիչ են, հիմնավորված և զերծ ավելորդ արանությունից, հակիրճ են և հստակ։ Եվ դա այն դեպքում, երբ ոչ մի մանրուք չի վրիպում գիտնականի աչքից։

Աշխատությունը, ինչպես գրված է գրքի առաջաբանում, պատրաստ է եղել տպագրությանը դեռևս տասը տարի առաջ, սակայն հրապարակումը հնարավոր է դարձել միայն 1973 թ. վերջին։

Մեզ հայտնի է, որ անվանի գիտնականն ունի պատրաստի ևս մի շատ կարևոր աշխատություն, նվիրված կիլիկյան հայկական մանրանկարչությանը։ Հուսով ենք, որ այն շուտով կըզառնա արվեստագետների և արվեստասեր ընթերցողների լայն շրջանների սեփականությունը։

Մեր միակ ցանկությունն է՝ Սիրարփի Տեր-Ներսեսյանի հետագա հրապարակումները օժտված տեսնել հնարավորին չափ ավելի շատ գունավոր վերարտադրություններով։

Է. ԿՈՐԽՄԱՋՅԱՆ